

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

Տավուշ

## ՔԻՄԻԱ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի սոսուցվում: Սոսուցվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթուղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1

Ո՞րն է արտահայտության լրացումը.

«Քիմիական տարրի կարգաթվի աճմանը զուգընթաց պարբերություններում փոփոխվում է պարբերաբար.....»:

- 1) Էլեկտրոնային շերտերի թիվը
- 2) արտաքին էլեկտրոնային շերտի կառուցվածքը
- 3) ատոմի միջուկում պրոտոնների թիվը
- 4) հարաբերական ատոմային զանգվածը

2

Ո՞րն է քիմիակական երևոյթի հատկանիշ.

- 1) ծավալի ընդարձակումը ջուրը սառույցի վերածելիս
- 2) ազրեգատային վիճակի փոփոխությունը
- 3) կապույտ գույնի առաջանալը, եթե անջուր պղնձի սուլֆատի փոշին լուծում են ջրում
- 4) օդի պղպջակների հայտնվելը սառը ջրով լցված բաժակի պատերին, եթե ջուրն ընդունում է սենյակի ջերմաստիճան

3

Բերված մասնիկներից ո՞րն ունի ազնիվ զազի էլեկտրոնային կառուցվածք.

- 1)  $\text{Sr}^{2+}$
- 2)  $\text{Zn}^{2+}$
- 3)  $\text{Fe}^{2+}$
- 4)  $\text{Mn}^{2+}$

4

Ո՞րն է տարրի կարգաթիվը, եթե նրա ատոմի արտաքին էներգիական մակարդակի որոշ էլեկտրոններ բնութագրվում են քվանտային թվերի հետևյալ արժեքներով  $n = 2$ ,  $\ell = 1$ ,  $m_s = 3/2$ .

- 1) 13
- 2) 5
- 3) 7
- 4) 15

5

Ո՞ր միջուկային ռեակցիայի արդյունքում կառաջանան  $\dots + \dots \rightarrow {}_{25}^{55}\text{Mn} + {}_0^1n$ .

- 1)  ${}_{24}^{52}\text{Cr} + {}_2^4\text{He}$
- 2)  ${}_{24}^{51}\text{Cr} + {}_2^4\text{He}$
- 3)  ${}_{23}^{52}\text{V} + {}_2^4\text{He}$
- 4)  ${}_{23}^{53}\text{V} + {}_2^4\text{He}$

6

Լաբորատորիայում հաճախ իրականացնում են հետևյալ ռեակցիաները.

ա) աղաքրթվից քլորի ստացում, բ) կալիումի քլորատից թթվածնի ստացում,  
գ) բրոմաջրածնական թթվից բրոսի ստացում, դ) ջրածնի պերօքսիդից թթվածնի ստացում: Ո՞ր ռեակցիաներում է մանգանի (IV) օքսիդը հանդես գալիս որպես կատալիզատոր.

- 1) ա, բ, դ
- 2) բ, գ
- 3) ա, բ, գ
- 4) բ, դ,

7

Համապատասխանեցրեք նյութի քիմիական բանաձևը ու դրա մոլեկուլում ածխածնի վալենտականության և օքսիդացման աստիճանի թվային արժեքները.

Քիմիական բանաձևը	Ածխածնի ատոմի	
	վալենտականություն	օքսիդացման աստիճան
Ա) $\text{H}_2\text{CO}_3$	1) 2	ա) +2
Բ) $\text{CO}$	2) 4	բ) -2
Գ) $\text{CH}_3\text{OH}$	3) 3	գ) +1
Դ) $\text{C}_2\text{H}_4$	4) 1	դ) +4 ե) -4 զ) -1 է) -3

- 1) Ա2դ, Բ3ա, Գ2է, Դ2բ
- 2) Ա1ե, Բ4բ, Գ3զ, Դ2զ
- 3) Ա2դ, Բ1ա, Գ2բ, Դ1բ
- 4) Ա2դ, Բ3ա, Գ2բ, Դ2բ

8

Ո՞ր տարբերակն է ճիշտ  $\text{BCl}_3$ -ի կառուցվածքի վերաբերյալ.

	Քիմիական կապ	Մոլեկուլի բներայնություն
1)	իոնային	քներային
2)	կովալենտ քներային	ոչ քներային
3)	կովալենտ քներային	քներային
4)	իոնային	ոչ քներային


9

Ո՞ր պնդումն է ճիշտ ջերմանցատիչ ռեակցիայի վերաբերյալ.

- 1) Հի գործում էներգիայի պահպանման օրենքը
- 2) խախտվում են էներգիայի և զանգվածի պահպանման օրենքները
- 3) Ելանյութերի մոլեկուլներում առկա քիմիական կապերի խզման համար ծախսվում է ավելի քիչ էներգիա, քան անցատվում է վերջանյութերի մոլեկուլներում նոր կապեր առաջանալիս
- 4) Ելանյութերի մոլեկուլներում առկա քիմիական կապերի խզման համար ծախսվում է ավելի շատ էներգիա, քան անցատվում է վերջանյութերի մոլեկուլներում նոր կապերի առաջացման ժամանակ

10

Ըստ հետևյալ էներգիական գծապատկերի, որքա՞ն է  $U + F \rightarrow Q$  ռեակցիայի ջերմության ( $\Delta H$ ,  $\bar{Q}$ ) արժեքը.



- 1) +125
- 2) -50
- 3) -75
- 4) +75

11


Կրաքրով ածխածնի (IV) օքսիդ անցկացնելիս դիտվել է սուսպենզիայի առաջացում և կրաքրուր պղտորվել է: Ո՞ր նյութը պետք է օգտագործել այն պարզեցնելու համար:

- 1) ազոտի (I) օքսիդ
- 2) սիլիցիումի (IV) օքսիդ
- 3) ածխածնի (II) օքսիդ
- 4) քլորաջրածին

**12** Ո՞ր շարք են ներառված ըստ կատիոնի հիդրոլիզվող աղերի բանաձևեր.

- 1)  $ZnSO_4$ ,  $FeCl_3$ ,  $NH_4NO_3$
- 2)  $K_2CO_3$ ,  $ZnCl_2$ ,  $KF$
- 3)  $NaHCO_3$ ,  $NH_4Cl$ ,  $K_2SO_3$
- 4)  $Na_3PO_4$ ,  $CH_3COONa$ ,  $AlCl_3$

**13** Բերված գրաֆիկներից ո՞րն է առավել ճիշտ արտահայտում ռեակցիայի արագության կախումը ջերմաստիճանից.




**14** Տրված են դարձելի ռեակցիաների հավասարումներ.

- |   |  |
|---|--|
| a) $PCl_3(g) + Cl_2(g) \rightleftharpoons PCl_5(g) + Q$ | p) $2CO(g) + O_2(g) \rightleftharpoons 2CO_2(g) + Q$   |
| q) $2NH_3(g) \rightleftharpoons N_2(g) + 3H_2(g) - Q$   | η) $2CO(g) \rightleftharpoons C(s) + CO_2(g) - Q$      |
| b) $N_2(g) + O_2(g) \rightleftharpoons 2NO(g) - Q$      | q) $2SO_2(g) + O_2(g) \rightleftharpoons 2SO_3(g) + Q$ |

Ո՞ր դեպքերում դարձելի ռեակցիայի հավասարակշռությունը կտեղաշարժվի դեպի ձախ միաժամանակ ճնշումը իշեցնելիս և ջերմաստիճանը բարձրացնելիս.

- 1) q, b
- 2) q, η, b
- 3) a, p, q
- 4) p, q

**15** Տրված է փոխարկումների հետևյալ շղթան



ո՞ր շարք են ներառված  $X_1$  վերջանյութի և փոխարկումներն իրականացնելու համար անհրաժեշտ  $X_2$ ,  $X_3$ ,  $X_4$  և  $X_5$  ազդանյութերի բանաձևերի ճիշտ հաջորդականությունը.

- 1) Cu,  $H_2SO_4(\text{լուս})$ , Fe,  $HNO_3$ ,  $Na_2S$
- 2) Cu,  $H_2SO_4(\text{լուս})$ , Fe,  $HNO_3$ ,  $H_2SO_3$
- 3) Cu,  $H_2SO_4(\text{լուս})$ , Fe,  $HNO_3$ ,  $SO_2$
- 4)  $Cu(OH)_2$ ,  $H_2SO_4(\text{լուս})$ ,  $CO_2$ ,  $HNO_3$ , S

- 16** Հետևյալ աղերից ո՞րն է լուծույթում փոխազդում ինչպես աղաթթվի, այնպես է նատրիումի հիդրօքսիդի հետ, եթե երկու դեպքում է անջատվում է գազ.
- 1)  $\text{NaHSO}_3$
  - 2)  $\text{CH}_3\text{COONH}_4$
  - 3)  $(\text{NH}_4)_2\text{CO}_3$
  - 4)  $\text{Ca}(\text{HCO}_3)_2$
- 17** Բերված ո՞ր գործոնը կնպաստի նիկելի սուֆատի ջրային լուծույթի էլեկտրոլիզի ժամանակ կաթոդի վրա նիկելի անջատմանը.
- 1) աղի կոնցենտրացիայի մեծացում
  - 2) անողից թթվածնի հեռացում
  - 3) աղի կոնցենտրացիայի փոքրացում
  - 4) ծծմբական թթվի ավելացում
- 18** Նատրիումի ացետատը լուծել են ֆենոլֆտալեին պարունակող ջրում, որից այն ստացել է թույլ վարդագույն երանգ: Այնուհետև լուծույթը տաքացրել են: Լուծույթի գույնի ի՞նչ փոփոխություն կդիտվի:
- 1) գունաթափում
  - 2) գույնի պահպանում
  - 3) գույնի մզացում
  - 4) գույնի թուլացում
- 19** Էթանոլի ջրային լուծույթում նյութերի զանգվածներն իրար հավասար են: Ո՞րն է դրանց բնութագրերի ճիշտ հարաբերակցությունը ( $\rho_{\text{թափառ}} = 0,8 \text{ g/cm}^3$ ).
- 1) Էթանոլի զանգվածային բաժինը փոքր է զրի զանգվածային բաժնից
  - 2) մոլային կոնցենտրացիաները հավասար են
  - 3) ծավալները նույնպես հավասար են
  - 4) զանգվածային բաժինները հավասար են
- 20** Ո՞ր մեծությունը հնարավոր չէ որոշել նյութի լուծելիությունից ( $q/100 \text{ g ջուր}$  ելնելով (առանց լրացուցիչ տվյալների)).
- 1) լուծույթի տիտրը
  - 2) լուծված նյութի մոլային բաժինը
  - 3) լուծված նյութի զանգվածային բաժինը
  - 4) զրի և լուծված նյութի մոլեկուլների թվերի հարաբերությունը
- 21** Ո՞ր պնդումն է ճիշտ օդով լցված փակ անոթում ածխածնի լրիվ այրման ժամանակ տեղի ունեցող փոփոխության վերաբերյալ.
- 1) ճնշումն անոթում փոքրանում է
  - 2) գազային նյութերի մոլեկուլների թիվը մեծանում է 30 %-ով.
  - 3) գազային նյութերի մոլեկուլների թիվը փոքրանում է
  - 4) ճնշումն անոթում չի փոփոխվում

**22** Ի՞նչ կառուցվածք է բնորոշ անհայտ նյութին, որը սովորական պայմաններում պինդ է, ունի հալման և եռման բարձր ջերմաստիճաններ և կերպարահղողիչ չէ, իսկ հալույթը կեկտրահաղորդիչ է.

- 1) հսկա իոնական
- 2) հսկա կովալենտային
- 3) մետաղական
- 4) մոլեկուլային

**23** Փակ անոթում գտնվող թթվածինը ենթարկել են կեկտրական պարպման: Ինչպես և փոփոխվել գազային խառնուրդի ծավալը անոթում.

- 1) փոքրացել է
- 2) մեծացել է 2 անգամ
- 3) մեծացել է աննշան չափով
- 4) մնացել է անփոփոխ

**24** Ի՞նչ նյութեր կստացվեն և ի՞նչ հաջորդականությամբ, եթե կալցիումի հիդրօքսիդի լուծույթին աստիճանաբար ավելացվի ֆոսֆորական թթու.

- 1)  $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$ ,  $\text{CaHPO}_4$ ,  $\text{Ca}_3(\text{PO}_4)_2$
- 2)  $\text{Ca}_3(\text{PO}_4)_2$ ,  $\text{CaHPO}_4$ ,  $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$
- 3)  $\text{Ca}_3(\text{PO}_4)_2$ ,  $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$ ,  $\text{CaHPO}_4$
- 4)  $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$ ,  $\text{Ca}_3(\text{PO}_4)_2$ ,  $\text{CaHPO}_4$

**25** Որոշակի զանգվածով կալիումի սուլֆիտը լուծել են մեկ լիտր ջրում և որոշել սուլֆիտ իոնների կոնցենտրացիան (a մոլ/լ): Այնուհետև նույն զանգվածով աղը լուծել են քիչ քանակությամբ քացախաթթու պարունակող մեկ լիտր ջրում (նույն ջերմաստիճանում), և դարձյալ որոշել սուլֆիտ իոնների կոնցենտրացիան՝ b մոլ/լ: Ինչպես և են փոխհարաբերում a և b:

- 1)  $a < b$
- 2)  $a << b$
- 3)  $a = b$
- 4)  $a > b$

**26** Անտրացիդներն օգտագործվում են ստամքսահյութի թթվայնության ավելցուկը նվազեցնելու համար: Բերված են 1-ական գրամ պարզագույն անտրացիդներ: Դրանցից ո՞րն ամենաարդյունավետը կլինիկ մարտության խանգարման դեմ պայքարում.

- 1)  $\text{Mg(OH)}_2$
- 2)  $\text{Al(OH)}_3$
- 3)  $\text{NaHCO}_3$
- 4)  $\text{Na}_2\text{CO}_3$

**27** Բերված ռեակցիաներից որի՞ ընթացում լուծույթի զանգվածը կփոքրանա.

- 1)  $\text{Fe} + \text{CuSO}_4 = \text{Cu}\downarrow + \text{FeSO}_4$
- 2)  $\text{Zn} + \text{CuSO}_4 = \text{Cu}\downarrow + \text{ZnSO}_4$
- 3)  $\text{Ag} + 2\text{HNO}_3 = \text{AgNO}_3 + \text{NO}_2\uparrow + \text{H}_2\text{O}$
- 4)  $\text{Cu} + 2\text{H}_2\text{SO}_4 = \text{CuSO}_4 + \text{SO}_2\uparrow + 2\text{H}_2\text{O}$

**28** Ո՞ր շարք ներառված նյութերն են հիմնականում առաջանում երկարի (III) քլորիդի և ծծմբաջրածնի փոխազդեցությունից.

- 1)  $\text{FeCl}_2, \text{S}$  և  $\text{HCl}$
- 2)  $\text{Cl}_2, \text{SO}_2, \text{HCl}$  և  $\text{Fe}$
- 3)  $\text{Fe}_2\text{S}_3$  և  $\text{HCl}$
- 4)  $\text{FeS}$  և  $\text{HCl}$

**29**  $\text{KMnO}_4 \rightarrow \text{MnSO}_4$  փոխարկումն իրականացնելու համար ո՞ր զույգ ներառված նյութերը պետք է ավելացնել.

- 1)  $\text{FeSO}_4, \text{H}_2\text{SO}_4$
- 2)  $\text{FeSO}_4, \text{H}_2\text{O}$
- 3)  $\text{O}_2, \text{H}_2\text{SO}_4$
- 4)  $\text{FeSO}_4, \text{NaOH}$

**30** Համապատասխանեցնել ընթացող ռեակցիայի մոլեկուլային հավասարման ձախ մասը, կրճատ իռնական հավասարումը և ռեակցիայի տեսակը.

մոլեկուլային հավասարման ձախ մաս	կրճատ իռնական հավասարումը	քիմիական ռեակցիաների տեսակ
w) $\text{Na}_2\text{SO}_3 + \text{SO}_2 + \text{H}_2\text{O} \rightarrow$	1) $\text{Na}_2\text{CO}_3 + \text{Mg}^{2+} \rightarrow \text{MgCO}_3 + 2\text{Na}^+$	Ա) տեղակալման
p) $\text{Na}_2\text{CO}_3 + \text{MgCl}_2 \rightarrow$	2) $\text{CO}_3^{2-} + \text{Mg}^{2+} \rightarrow \text{MgCO}_3$	Բ) փոխանակման
q) $\text{NH}_4\text{NO}_{(զ)} + \text{KOH}_{(զ)} \rightarrow$	3) $\text{SO}_3^{2-} + \text{SO}_2 + \text{H}_2\text{O} \rightarrow 2\text{HSO}_3^-$	Գ) միացման
η) $\text{CuO} + \text{H}_2\text{SO}_4 \rightarrow$	4) $\text{SO}_3^{2-} + \text{SO}_2 + \text{H}_2\text{O} \rightarrow 2\text{HSO}_4^-$	
ե) $\text{Cu} + \text{AgNO}_3 \rightarrow$	5) $\text{NH}_4^+ + \text{OH}^-_{(զ)} \rightarrow \text{NH}_3 + \text{H}_2\text{O}_{(զ)}$ 6) $\text{CuO} + 2\text{H}^+ \rightarrow \text{Cu}^{2+} + \text{H}_2\text{O}$ 7) $\text{Cu}^{2+} + \text{SO}_4^{2-} \rightarrow \text{CuSO}_4$ 8) $\text{Cu}^0 + 2\text{Ag}^+ \rightarrow \text{Cu}^{2+} + 2\text{Ag}^0$	

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3գ, բ2գ, զ5բ, դ6բ, ե7Ա
- 2) ա4գ, բ1բ, զ4Ա, դ6բ, ե8Բ
- 3) ա3գ, բ2բ, զ5բ, դ6բ, ե8Ա
- 4) ա3բ, բ2բ, զ4Ա, դ7Ա, ե8Ա


**31** Ցինկի ձողը ընկդմել են ծծմբական թթվի լուծույթի մեջ, որի հետևանքով ընթացել է  $Zn + 2H^+ = Zn^{2+} + H_2 \uparrow$ : Ո՞ր դեպքում կմեծանա այդ ռեակցիայի արագությունը, եթե լուծույթում ցինկի ձողը հպման մեջ դրվի հետևյալ մետաղների հետ. *a) Fe, p) Pb, q) Mn, r) Al, s) Cu.*

- 1) *a, q, r*
- 2) *q, r, s*
- 3) *a, p, q*
- 4) *a, p, s*

**32** Ի՞նչ հնարավոր մեխանիզմով է տեղի ունենում երրորդային ալկիլհալոգենիդների և ալկալու ջրային լուծույթի փոխազդեցությունը.

- 1) նուկլեաֆիլ տեղակալում  $S_N1$
- 2) էլեկտրաֆիլ միացում
- 3) էլեկտրոֆիլ տեղակալման
- 4) նուկլեաֆիլ տեղակալում  $S_N2$

**33** Հատ բերված շղթայի՝



Ո՞ր արտահայտությունն է ճիշտ.

- 1)  $U$  և  $F$  նյութերն ունեն երկուական իզոմեր
- 2)  $U$  և  $F$  նյութերը պատկանում են միևնույն հոմոլոգիական շարքին
- 3)  $U$ -ն տալիս է արծաթահայելու ռեակցիա
- 4)  $F$ -ն տալիս է արծաթահայելու ռեակցիա

**34** Պրոպինի տրիմերացումից առաջանում է բնագոլի հոմոլոգներից մեկը: Որքա՞ն է  $sp^3$  հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը ստացվող նյութի մոլեկուլում.

- 1) 2
- 2) 4
- 3) 6
- 4) 3

**35** Ո՞ր շարք են ներառված 1-պրոպանոլից ացետոնի ստացման փուլերի ճիշտ հաջորդականությունը.

- 1) օքսիդացում, վերականգնում, ջրի պոկում
- 2) ջրի պոկում, ջրի միացում, վերականգնում
- 3) ջրի պոկում, օքսիդացում, վերականգնում
- 4) ջրի պոկում, ջրի միացում, օքսիդացում

**36**

Հետևյալ ո՞ր նյութերի և թարմ ստացված պղնձի (II) հիդրօքսիդի միջև կարող է ընթանալ վերօք ռեակցիա համապատասխան պայմաններում. *a)*  $HCl$ ,  
*b)*  $CH_3CHO$ , *c)*  $HCOOH$ , *d)*  $C_{12}H_{22}O_{11}$  (սախարով), *e)*  $C_3H_8O_3$  (զլիցերին)

- 1) *a, b, c*
- 2) *b, d, e*
- 3) *b, c*
- 4) *b, e*

**37**

Բերված ո՞ր փոխարկումներում է օգտագործվում ծծմբական թթու (խիտ կամ նոսր). *1)* բենզովի նիտրացում, *2)* էթիլենի հիդրում, *3)* սոլուտի նիտրացում,  
*4)* էթանոլի դեկինդրատացում, *5)* բենզովի բրոմացում, *6)* օւլայի հիդրոլիզ.

- 1) *1, 3, 5, 6*
- 2) *2, 4, 5*
- 3) *1, 5, 6*
- 4) *1, 3, 4, 6*

**38**

Համարակալված փորձանորներում գտնվում են հետևյալ նյութերը՝ *a)* զյուկով,  
*b)* ֆրուկտով, *c)* ռիբով, *d)* ացետոն, *e)* սախարով: Ո՞ր փորձանորի  
 պարունակությունը կիրարական արձարի օքսիդի ամոնիակային լուծույթի հետ  
 համապատասխան պայմաններում.

- 1) *a, c*
- 2) *b, e*
- 3) *a, b, c*
- 4) *a, c, d*

**39**

Պրոպանի և էթիլամինի խառնուրդի հարաբերական խտությունն ըստ հելիումի *a* է: Այն խառնել են հավասար ծավալով քլորաջրածնի հետ: Ռեակցիան  
 ավարտվելուց հետո մնացած զազային խառնուրդի խտությունն ըստ հելիումի *b* է:  
 Ինչպես են փոխհարաբերում *a* - ն և *b* - ն.

- 1) *a < b*
- 2) *a << b*
- 3) *a > b*
- 4) *a = b*

**40** RCOOR' կառուցվածքով էսթերը հանդես է գալիս 9 իզոմեր էսթերների ձևով: Ըստ որում սահմանային շարքի ռադիկալներից մեկը կարող է լինել ջրածնի ատոմ: Ո՞րքան է R և R' ռադիկալներում ածխածնի ատոմների գումարային թիվը.

- 1) 6
- 2) 3
- 3) 4
- 4) 5

**41** Մետաղական ցինկը լուծել են անհրաժեշտ քանակով նատրիումի հիդրօքսիդի լուծույթում, այնուհետև լուծույթին ավելացրել են այնքան աղաթու, որ առաջացել է հնարավոր առավելագույն զանգվածով՝ 198 գ նստվածք: Վերջինս ֆիլտրելով անջատելուց հետո մնացած լուծույթի զանգվածը եղել է 355 գ: Որքան ն է մնացած լուծույթում քլորիդ իոնների զանգվածային բաժինը (%):

- 42** Թթվածնի, ջրածնի և ածխածնի(II) օքսիդի խառնուրդի խտությունն ըստ հելիումի 5,9 է: 70 լ (ն. պ.) ծավալով այդ խառնուրդը լրիվ այրելու համար պահանջվել է նույն ծավալով օդ: Որքա՞ն է այրման գործընթացին մասնակցած թթվածնի զանգվածը (գ):

- 43** Լիթիումի նիտրատը ենթարկվում է ջերմային քայքայման ըստ հետևյալ հավասարման:



Որքա՞ն է լիթիումի նիտրատի քայքայման ռեակցիայի ստանդարտ էնթալպիայի փոփոխությունը՝  $\Delta H$  (կՋ մոլ $^{-1}$ ): Պատասխանում ներկայացնել միայն թվային արժեքը:

Առաջացման ստանդարտ էնթալպիաների փոփոխությունների,  $\Delta H_{\text{առ.}}^0$ , որոշ արժեքներ ներկայացված են աղյուսակում:

միացություն	առաջացման ստանդարտ էնթալպիայի փոփոխություն՝ կՋ մոլ $^{-1}$
$\text{LiNO}_3(\text{պ})$	- 482
$\text{Li}_2\text{O}(\text{պ})$	- 598
$\text{NO}_2(\text{գ})$	+34

**44**

$H_2 + I_2 = 2HI$  ռեակցիան ընթանում է Վլ ծավալում: Հավասարակշռության վիճակում գտնվող խառնուրդը պարունակում է 1 գ ջրածին, 127 գ յոդ, 256 գ յոդազրածին: Քանի ՞ անգամ է ուղիղ ռեակցիայի արագության հաստատունը մեծ հակառակ ռեակցիայի արագության հաստատունից:

**45**

Նատրիումի պրոպիոնատի և քացախաթթվի 85,5 գ զանգվածով նմուշը քանակապես փոխազդել է 2,5 մոլ/լ կոնցենտրացիայով լիթիումի հիդրօքսիդի 250 մլ լուծույթի հետ: Նույն քաղաքառությամբ և զանգվածով խառնուրդի մի այլ նմուշը չոր նատրիումի հիդրօքսիդի ավելցուկի հետ շիկացնելիս անջատվել է գազային խառնուրդ: Որքա՞ն է այդ գազային խառնուրդի զանգվածը (գ):

(46-47) Պատրաստել են մագնեզիումի սուլֆատի  $70^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում հազեցած լուծույթ և այն սառեցրել մինչև  $50^{\circ}\text{C}$ : Անջատվել է  $228 \text{ g}$  բյուրեղահիդրատ  $\text{MgSO}_4 \cdot 6\text{H}_2\text{O}$ : Անջուր աղի լուծելիությունը  $70^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում  $60 \text{ g}$  է  $100 \text{ g}$  ջրում, իսկ  $50^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝  $50 \text{ g}$ :

46 Որքա՞ն է սկզբնական լուծույթի զանգվածը (q):

47 Ի՞նչ զանգվածով (q) ջուր պետք է ավելացնել սկզբնական լուծույթին՝ անջուր աղի  $25\%$  զանգվածային բաժնով նոր լուծույթ ստանալու համար:

(48-49) Ամոնիակի և թթվածնի 448 լ (ն. պ.) խառնուրդը, որում թթվածնի ծավալային բաժինը 70 % է, պլատին-ոռղջումային կատալիզատորի վրա տաքացնելիս ամոնիակն օքսիդացել է 100 %-ով: Ստացված գազագոլորշային խառնուրդը փակ անոթում պահել են մինչև բռնոր քիմիական ռեակցիաների ավարտը:

48

Որքա՞ն է փակ անոթում ստացված լուծույթի զանգվածը (գ):

49

Որքա՞ն է վերջնական արգասիքի մոլային բաժինը (%) ստացված լուծույթում:

- (50-51) Պղնձի(II) սուլֆատի լուծույթի մեջ ընկղմել են օքսիդաթաղանթից մաքրած այումինե թիթեղ: Որոշ ժամանակ անց, երբ թիթեղի զանգվածի փոփոխությունը կազմել է 5,52 գ, այն հանել են, լվացել, չորացրել և փոխազդեցության մեջ դրել թլորի հետ: Վերջինիս ծախսը եղել է 168 լ (ն. պ.):

50 Որքա՞ն է լուծույթում գոյացած աղի քանակը (մմոլ):

51 Որքա՞ն է այումինե թիթեղի սկզբնական զանգվածը (գ):

(52-53) Անհրաժեշտ է պատրաստել 0,2 մոլ/լ կոնցենտրացիայով ջրածնի կատիոնների 5 լ լուծույթ՝ ծծմբի (IV) օքսիդը ջրում լուծելով։ Ջրի հետ նշված օքսիդի փոխազդեցության ելքը 40 % է։ Գոյացած թթվի դիտցման առաջին աստիճանը 25 %, իսկ երկրորդ փուլով դիտցումն անտեսվում է։

52

Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) ծծմբային գազ պետք է լուծել ջրում՝ այդպիսի լուծույթ ստանալու համար։

53

Ի՞նչ քանակով (մոլ) պիրիտ պետք է այրել պահանջվող քանակությամբ ծծմբի (IV) օքսիդը ստանալու համար։

(54-55) Պայթեցրել են մեթան, արգոն և ավելցուկով թթվածին պարունակող 20 մլ զազային խառնուրդը, որի խտությունն ըստ հելիումի 7,4 է: Համակարգը սկզբնական պայմանների բերելուց հետո մնացել է 10 մլ զազ:

54

Ի՞նչ ծավալով (մլ) թթվածին է պարունակում ելային խառնուրդը:

55

Որքա՞ն է արգոնի ծավալային բաժինը (%) վերջնական խառնուրդում:

- (56-58) Ֆենոլի, պրոպանաթթվի և պրոպենաթթվի 1,15 գ խառնուրդը քանակապես փոխազդել է 6 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 10 գ լուծույթի հետ: Ստացված լուծույթը գոլորշացրել են, պինդ մնացորդը չորացրել: Հայտնի է, որ եղային խառնուրդը կարող է գունազրկել 2 % զանգվածային բաժնով 100 գ բրոմաջուրը:

56

Որքա՞ն է պրոպանաթթվի զանգվածը (մգ) խառնուրդում:

57

Քանի՞ անգամ է պրոպենաթթվի նյութաքանակը խառնուրդում գերազանցում ֆենոլի նյութաքանակը:

58

Որքա՞ն է պինդ մնացորդի զանգվածը (մգ):

(59-61) 5 մոլ/լ կոնցենտրացիայով նատրիումի հիդրօքսիդի 1,6 լ լուծույթին ( $\rho=1,25\text{g/l}$ ) ավելացրել են 272 գ ցինկի քլորիդ պարունակող 860 գ լուծույթ: Ստացված լուծույթին ավելացրել են փոխազդեցության համար անհրաժեշտ 40 % զանգվածային բաժնով քլորաջրածնի լուծույթ:

59 Որքա՞ն է լուծույթում գոյացած նատրիումի ցինկատի՝  $\text{Na}_2\text{ZnO}_2$ , զանգվածային բաժինը (%):

60 Առավելագույնը ի՞նչ զանգվածով (գ) 40 % զանգվածային բաժնով քլորաջրածնի լուծույթի հետ կարող է փոխազդել ստացված լուծույթը:

61 Ի՞նչ զանգվածով (գ) 25 % զանգվածային բաժնով արծաթի նիտրատի լուծույթ կծախսվի վերջնական լուծույթից քլորիդ իոնները հեռացնելու համար:

- (62-64) 8 % զանգվածային բաժնով պղնձի (II) սուլֆատի 200 գրամ լուծույթին ավելացրել են որոշակի զանգվածով պղնձարջասապ և ստացել անօռու աղի 19,2 % զանգվածային բաժնով նոր լուծույթ: Վերջինս իներտ էլեկտրոդներով ենթարկել են էլեկտրոլիզի, իսկ էլեկտրոլիզը դադարեցնելուց հետո մնացած լուծույթին ավելացրել են անիրաժեշտ քանակությամբ նատրիումի հիդրօքսիդ պարունակող 61,6 գ լուծույթ: Գոյացել է նստվածք, որն առանձնացրել են և պարզել, որ մինչև հաստատուն զանգված շիկացնելիս նրա զանգվածը պակասում է 3,6 գրամով:

62

Որքա՞ն է սկզբնական լուծույթին ավելացրած պղնձարջասապի զանգվածը (գ):

63

Որքա՞ն է անողի վրա անջատված գազի ծավալը (մ<sub>3</sub> ն. պ.):

64

Որքա՞ն է նստվածքի առանձնացումից հետո մնացած լուծույթում աղի զանգվածային բաժինը (%):

- (65-67) Որոշակի զանգվածով ամոնիումի կարբոնատը լուծել են ջրում և ստացված լուծույթը բաժանել երկու հավասար մասի: Առաջին կեսի վրա ավելցուկով վերցրած նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս անջատվել է A զազր, իսկ երկրորդ կեսի վրա ավելցուկով վերցրած աղաթու ավելացնելիս անջատվել է B զազր, որի զանգվածը 1,875 գրամով մեծ է A զազրի զանգվածից:

65

Որքա՞ն է ամոնիումի կարբոնատի սկզբնական զանգվածը (գ):

66

Որքա՞ն է B զազրի զանգվածը (մգ):

67

Ո՞ր ջերմաստիճանում ( $^{\circ}\text{C}$ ) A զազրի ծավալը կհավասարվի B զազրի ծավալին (ն. պ.) 228,25 կՊա ճնշման պայմաններում ( $R = 8,3 \Omega/\text{Կ}\cdot\text{մոլ}$ ):

68

Համապատասխանեցրեք նյութի անվանումը և արդյունաբերական ստացման եղանակը.

անվանում	արդյունաբերական ստացման եղանակը
ա) անիլին բ) ֆենոլ գ) մեթանալ դ) մեթանոլ	<ol style="list-style-type: none"> <li>1) Էթիլենօքսիդի հիդրոլիզից</li> <li>2) իզոպրոպիլ բենզոլը օդի թթվածնով կատալզատորի առկայությամբ տաքացնելիս</li> <li>3) մեթանի օքսիդացում <math>400\text{-}600^{\circ}\text{C}</math> ջերմաստիճանում, ազոտի օքսիդների կատալիզային ազդեցությամբ</li> <li>4) նիտրոբենզոլի վերականգնումը, երկաթի առկայությամբ ջրային գոլորշում տաքացնելով</li> <li>5) ածխածնի (II)օքսիդի և ջրածնի փոխազդեցությունից, ցինկ-քրոմային կատալիզատորի առկայությամբ</li> <li>6) էթիլենի օքսիդացում պալադիումի և պղնձի քլորիդների առկայությամբ</li> <li>7) բնական գազից <math>1400\text{-}1500^{\circ}\text{C}</math>-ում</li> </ol>

69

Հաստատեք կամ հերքեք պնդումների ճշմարտացիությունը նյութերի կառուցվածքի որոշման և անալիզի եղանակների վերաբերյալ.

- 1) Մաս սպեկտրում միայն դրական իոններն են ազդանշաններ առաջացնում:
- 2) pH-ը ջրային լուծույթում ջրածնի իոնների կոնցենտրացիայի (մոլ/լ) տասնորդական բացասական լոգարիթմն է՝  $\text{pH} = -\lg[\text{H}^+(\text{ջր})]$ :
- 3) Ամինաթթուների բաժանման հիմքում ընկած է  $\text{SiO}_2$ -ի կամ ցելյուլոզի շերտով պատված այսումինե կամ ապակյա թիթեղների կիրառմամբ նրբաշերտային քրոմատոգրաֆիայի (ՆՇՔ) մեթոդը:
- 4) Հիմնային բուֆերային լուծույթ կարելի է պատրաստել ամոնիումի քլորիդի և ամոնիակի լուծույթները որոշակի հարաբերությամբ խառնելով:
- 5) Թթվահիմնային բուֆերը լուծույթ է, որին քիչ քանակությամբ ուժեղ հիմք կամ թթու ավելացնելիս pH-ը փոխվում է մեծ չափով:
- 6) Ինֆրակարմիք (ԻԿ) սպեկտրաչափության մեթոդը միշտ կարելի է օգտագործել մոլեկուլներում առկա կապերը նույնականացնելու և ֆունկցիոնալ խմբերը տարբերակելու համար:

70

Այրել են գազային խառնուրդ՝ կազմված 10 % ըստ ծավալի մեթիլասինից, թթվածնից և ազոտից : Գոյացած 1,8 գ ջուրը հեռացնելուց հետո մնացած գազային խառնուրդին ավելացրել են 0,4 մոլ մեթան և նորից այրել : Ջուրը դարձյալ անջատելուց և խառնուրդը սկզբնական պայմանների բերելուց հետո ծավալը դարձել է 14,336 լ (ն. պ.): Հաստատել կամ հերքել պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ:

- 1) Ազոտի ծավալային բաժինը վերջնական խառնուրդում 31,25 % է:
- 2) Ավելացրած մեթանի 15 % է (ըստ ծավալի) այրվել:
- 3) Ելային գազային խառնուրդը եղել է 0,4 մոլ:
- 4) Ելային գազային խառնուրդն այրելիս ծախսվել է 0,09 մոլ թթվածին:
- 5) Այրման երկու գործընթացներում ծախսվել է 200 մմոլ թթվածին:
- 6) Այրման երկու գործընթացներում ստացված նոր գազային խառնուրդը կրաշրու անցկացնելիս կստացվի 8,5 գ նստվածք: